





Ուղեցույցը մշակվել և տպագրվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) Աշխատանքային միգրանտների իրազեկման կենտրոնի կողմից Աշխատանքի միջազգային կամակերպության «Ռուսաստանի

Դաշնությունում միգրանտ աշխատողների պաշտպանության բարելավման և Հարավային Կովկասում միգրացիայի դրական ազդեցության ընդլայնումը» ծրագրի շրջանակներում՝ Եվրամիության ֆինանսական աջակցությամբ:

Ուղեցույցում ընդգրկված տեղեկատվությունը համաձայնեցված է Հայաստանում Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայության ներկայացուցչության հետ:

Ուղեցույցում զետեղված նյութերի համար Եվրամիությունը և Աշխատանքի միջազգային կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում:



With funding by  
the European Union





# **ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆՈՂ ՄԻԳՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ**

**ՈՒՂԵՅՈՒՅՑ**

**ԵՐԵՎԱՆ 2011**

Եթե Դուք դաժանաբան եք մեկնել Ռուսաստանի Դաժանություն (ՌԴ) աշխատելու նպատակով, ապա այս ուղեցույցը Ձեզ համար է:

Մինչ ՌԴ-ում աշխատանքի փնտրելը դեռ է իմանալ, որ ՌԴ և ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դրույթները տարածվում են բոլոր միգրանտ աշխատողների վրա միայն նրանց կողմից օրինական աշխատանքային գործունեություն ծավալելու դեպքում:

Այստեղ զետեղված են միգրանտների իրավունքները, դաժանաբանությունները և դաժանաբանությունները, համաձայն ՌԴ օրենսդրության, նկարագրված են հավանական կանգնելու, աշխատանքի իրավունք ստանալու համար նախատեսված փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են ՌԴ մուտք գործելու և ժամանակավորապես բնակվելու համար:

## ՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ՝

Աշխատելու նպատակով այլ պետությունն մեկնելը հաճախ պայմանավորված է դժվարություններով և բազմաթիվ խոչընդոտներով, ուստի՝

հետևե՛ք այս խորհուրդներին

### Մեկնելուց առաջ

1. Հավաստի տեղեկատվություն ունեցե՛ք Ձեր աշխատանքի և գործատուի վերաբերյալ: Գիտե՛ք նաև, որտե՞ղ և ինչպիսի՞ պայմաններում ե՛ք բնակվելու և աշխատելու:
2. Ծանոթացե՛ք ՌԴ միգրացիոն օրենսդրությանը:
3. Ծանոթացե՛ք Ձեր իրավունքներին և պարտականություններին համաձայն ՌԴ օրենսդրության:
4. Բոլոր փաստաթղթերը թարգմանե՛ք ռուսերեն՝ նոտարական վավերացմամբ:



## ՌԴ-ում գտնվելու ընթացքում

5. Մի՛ վստահեք Ձեր անձնագիրը, փաստաթղթերը այլ անձանց:



6. Ունեցե՛ք բոլոր փաստաթղթերի պատճենները:
7. Անցե՛ք բժշկական զննում:
8. Պահե՛ք Ձեզ մոտ այս ուղեցույցը:



## **ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼԸ**

### **- Սահմանի հատումը`**

ՌԴ սահմանը պետք է հատել օրինական ճանապարհով:

Սահմանը հատելիս անհրաժեշտ է ներկայացնել`

- ՀՀ անձնագիր

(անպայման ստուգեք անձնագրի վավերականության ժամկետը)

- ՌԴ միգրացիոն քարտը

### **Ուշադրություն**

Ձեզ չի թույլատրվի հատել ՌԴ սահմանը կամ մուտք գործել ՌԴ տարածք, եթե`

- Դուք խախտել եք սահմանը հատելու կանոնները հսկիչ անցագրային կետում,
- նախորդ այցի ժամանակ Դուք արտաքսվել եք երկրից (այդ պահից սկսած հինգ տարվա ընթացքում չեք կարող մուտք գործել ՌԴ տարածք),
- ունեք չմարված դատվածություն,
- առկա է լիազոր մարմնի որոշում` օտարերկրյա քաղաքացու այցի անցանկալի լինելու մասին:



ՌԴ տարածքում գտնվելու ընթացքում անձնագիրը կորցնելու դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՀ դեսպանատուն, հյուպատոսարան՝ վերադարձի թույլտվության վկայական ստանալու համար:

Վկայական ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում:

## **ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՐՏԸ**

Միգրացիոն քարտի ձևաթուղթը տրամադրվում է անվճար՝ սահմանը հատելու ժամանակ անցագրային կետում կամ տրանսպորտային ծառայություններ մատուցող կազմակերպության ներկայացուցիչների կողմից, օրինակ, օդանավի անձնակազմի կողմից:

Միգրացիոն քարտը պարտադիր լրացրեք անձամբ:

Այն լրացվում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, սակայն եթե Դուք կասկածում եք, որ կարող եք այն ճիշտ լրացնել ռուսերենով, ապա Ձեր անձնագրում լատիներեն գրված տվյալները (անուն, ազգանուն, անձնագրի սերիա և այլն) նույնությամբ արտագրեք միգրացիոն քարտի համապատասխան բաժինների **A** և **B** հատվածներում և ստորագրեք: Անձնագրային ստուգման կետում ստուգեք՝ միգրացիոն քարտի վրա պետք է դրվի մուտքի կնիք անձնագրային ստուգում իրականացնող ծառայողի կողմից և **B** հատվածը վերադարձվի Ձեզ:

Միգրացիոն քարտը կորցնելու դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել միգրացիոն ծառայություն՝ կրկնօրինակը ձևակերպելու համար:

Պահպանեք նաև տրանսպորտային միջոցի տոմսը, որով ժամանել եք Ռուսաստանի Դաշնություն:

## Ռշադրություն՝

Միգրացիոն քարտը լրացնելիս «ժամանման նպատակը» բաժնում ընդգծեք «работать» «աշխատել» բառը, հետագայում աշխատանքի թույլտվություն ստանալու ժամանակ բարդություններից խուսափելու համար:

Միգրացիոն քարտը պահեք Ձեզ մոտ մնացած փաստաթղթերի հետ ՌԴ-ում գտնվելու ամբողջ ընթացքում, քանի որ վերադառնալիս սահմանային անցման կետում Ձեզանից կպահանջվի ներկայացնել այն:

## **Հասցեներ և հեռախոսահամարներ, որտեղ կարող եք դիմել անհրաժեշտության դեպքում**

### **ՌԴ-ում ՀՀ դեսպանություն**

Մոսկվա, Արմյանսկի պերեուլոկ, տուն 2,

հեռ.(495) 924-12-69, 924- 45- 35

URL: [www.armenianembassy.ru](http://www.armenianembassy.ru)

### **ՌԴ-ում ՀՀ գլխավոր հյուպատոսություն**

Սանկտ -Պետերբուրգ, Ղեկաբրիստների 22,

հեռ (812)571-72-36

### **ՌԴ-ում ՀՀ հյուպատոսական կետ Սոչիում**

հեռ. (8622) 67- 41- 42

### **ՌԴ-ում ՀՀ հյուպատոսական կետ Ռոստովում**

հեռ. (8632) 53- 64- 54

## Միգրացիոն հաշվառումը



## ***ՌԴ-ում գործում է osawերկրյա ֆաղաֆացիների հաշվառման հեՏևյալ կարգը՝***

Ռուսաստանի Դաշնությունն մուտք գործելու օրից յոթ աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է հաշվառվել Ձեր բնակության վայրի տարածքային միգրացիոն ծառայությունում: Հաշվառման կանգնելու համար հյուրընկալող կողմի ներկայությունը պարտադիր է, մինչդեռ Ձեր ներկայությունը պարտադիր չէ: Հյուրընկալող կողմը կարող է լինել ֆիզիկական անձ, որի տանը Դուք բնակվում եք: Միգրացիոն ծառայությունում հաշվառումը կարելի է իրականացնել նաև փոստով ծանուցում ուղարկելու միջոցով:

**Ծանուցման բլանկը կարող եք վերցնել փոստում կամ ցանկացած միգրացիոն ծառայության կետում:**

### **Միգրացիոն ծառայություն ծանուցելու կարգը**

1. Դուք տրամադրում եք միգրացիոն քարտը, ծանուցման բլանկը և Ձեր անձնագիրը ընդունող կողմին:

2. Հյուրընկալող կողմը Ձեր կողմից տրամադրած փաստաթղթերի հիման վրա լրացնում է ծանուցման բլանկը և մեկ օրվա ընթացքում՝

- բլանկը,
- Ձեր անձնագրի պատճեն
- միգրացիոն քարտը

ներկայացնում է Դաշնային միգրացիոն ծառայություն անձամբ կամ ուղարկում է փոստով: Միգրացիոն հաշվառման կանգնելու համար վճարվում է պետական տուրք օրական 2 ՌԴ ռուբլի չափով, սակայն ոչ ավել, քան 180 ՌԴ ռուբլի: Պետական տուրքը գանձվում է հյուրընկալող կողմից:

Միգրացիոն ծառայության աշխատակիցը բլանկի վրա կատարում է նշում ծանուցումը ընդունելու մասին և բլանկի նշում կատարած հատվածը վերադարձնում ներկայացնողին:

Ծանուցումը կարելի է ուղարկել փոստով: Փոստով ուղարկելու ծառայության լրիվ արժեքը 180 ռուբլի է գումարած փոստային ծախսերը: Այդ դեպքում ծանուցումը լրացվում է երկու օրինակից և փոստատան համապատասխան աշխատակիցը Ձեր օրինակի վրա կատարում է նշում ընդունման մասին:

Մեկնելուց առաջ ծանուցման բլանկի համապատասխան հատվածը փոխանցեք ընդունող կողմին՝ Դաշնային միգրացիոն ծառայության տարածքային մարմին ներկայացնելու համար: **Այն պետք է կատարվի Ձեր մեկնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:**

Միգրացիոն ծառայությունում հաշվառվելուց հետո Դուք կարող եք 90 օր (սկսած սահմանը հատելու օրից) օրինական գտնվել ՌԴ տարածքում:

ՌԴ տարածքում օրինական գտնվելու համար Դուք պետք է ունենաք հետևյալ փաստաթղթերը՝

- միգրացիոն քարտ՝ սահմանը հատելու մասին նշումով,

- Ձեզ ընդունելու մասին ժամուցման բլանկի միգրացիոն ծառայության կողմից կատարված նշումով համապատասխան հատվածը,

- Ձեր անձնագիրը:

Խորհուրդ ենք տալիս Ձեզ մոտ ունենալ բոլոր փաստաթղթերի պատճենները կապված միգրացիոն հաշվառման կանգնելու հետ: Պատճենների առկայությունը անհրաժեշտ է փաստաթղթերի կորստի դեպքում դրանց առկայությունը հաստատելու համար:

Վերը նշված փաստաթղթերի առկայությունը բավական է, եթե Դուք հյուր եք և 90 օրը լրանալուն պես կամ մինչ այդ մեկնելու եք ՌԴ-ից: Սակայն եթե Դուք պատրաստվում եք աշխատել, ապա Ձեզ անհրաժեշտ է աշխատելու թույլտվություն կամ պատենտ:

Ուշադրություն՝

Միգրացիոն հաշվառման կարգի և/կամ ժամկետների խախտումը կարող է հանգեցնել վարչական պատասխանատվության 2000-5000 ՌԴ ռուբլի տույժի չափով, իսկ առանձին դեպքերում՝ երկրից արտաքսման:

## ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՐԿԱՐԵՑՈՒՄԸ

Միգրացիոն հաշվառման երկարեցումը փոքր-ինչ տարբերվում է առաջին անգամ միգրացիոն հաշվառումից: Ժամանման մասին նոր ծանուցումից, անձնագրի և միգրացիոն քարտի պատճեններից և վճարված պետական տուրքի անդորրագրից բացի անհրաժեշտ է նաև ՌԴ-ում Ձեր կացության ժամկետը երկարեցնելու իրավունքը հաստատելու մասին փաստաթղթերի պատճենները: Դրանք կարող են լինել աշխատանքի թույլտվությունը կամ պատենտը վճարման անդորրագրերի հետ միասին: Բացի նշվածներից անհրաժեշտ են նաև նախկին ծանուցման բլանկի Ձեր օրինակը, հյուրընկալող կողմի միջնորդությունը իր հասցեում Ձեր միգրացիոն հաշվառման ժամկետը երակարած գելու մասին, դիմում Ձեր կողմից միգրացիոն հաշվառման ժամկետը երկարած գելու խնդրանքով՝ նշելով նման որոշում կայացնելու նպատակը և հիմքը:

Այս փաստաթղթերը չեն կարող ուղարկվել փոստով, այլ հյուրընկալող կողմը անձամբ պետք է ներկայացնի միգրացիոն ծառայություն: Հարգելի պատճառների առկայության դեպքում (օրինակ՝ հիվանդության) Դուք անձամբ պետք է բոլոր փաստաթղթերը ներկայացնեք միգրացիոն դաշնային ծառայություն: Միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել հյուրընկալող կողմի անձնագրի պատճեն և բացակայության հարգելի պատճառը հավաստող փաստաթուղթ (օրնակ՝ տեղեկանք բժշկից):

Միգրացիոն հաշվառման ժամկետը երկարած գելու պետական տուրքը կազմում է օրական **2 ՌԴ** ռուբլի, սակայն ոչ ավելի, քան **600 ՌԴ** ռուբլի ամբողջ ժամանակահատվածի համար:

Ռուսաստանի Դաշնային միգրացիոն ծառայությունում միգրացիոն քարտի վրա կդնեն նոր կնիք ժամկետը երկարած գելու մասին և Ձեզ կվերադարձնեն նոր ծանուցման բլանկի Ձեր օրինակը միգրացիոն նոր հաշվառման մասին նշումով:



# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼԸ

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ԳՈՐԾԱՏՈՒԻ ՄՈՏ



## **- ԱՇխատելու թույլսվություն**

Գործատուին ընտրելուց առաջ հարկավոր է հիշել, որ Ռուսաստանում գոյություն ունեն սահմանափակումներ որոշակի աշխատանքների դեպքում օտարերկրյա քաղաքացիների համար:

Երեք ամսից ավելի ժամկետով աշխատանքի թույլտվություն ձևակերպելու համար անհրաժեշտ է միգրացիոն ծառայություն ներկայացնել գործատուի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի նախագիծը՝ համաձայն օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված քվոտաների ցանկի:

Աշխատելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է միգրացիոն ծառայության տարածքային մարմին ներկայացնել դիմում աշխատանքային գործունեություն ծավալելու թույլտվության վերաբերյալ 2 օրինակից: Դիմումը լրացվում է ռուսերեն տպագիր տառերով կամ էլեկտրոնային տարբերակով, միևնույն ժամանակ չի թույլատրվում օգտագործել կրճատ բառեր և հապավումներ: Դիմումում զետեղված տվյալները պետք է լինեն սպառիչ: Դիմումի բլանկի համապատասխան պատուհանում անհրաժեշտ է սոսնձել 30x40 մմ չափի գունավոր լուսանկար: Դիմումին պարտադիր կցվում է՝

1. անձնագիրը և դրա պատճեն
2. միգրացիոն քարտը՝ սահմանի ստուգակետը անցնելու մասին նշումով և դրա պատճեն

3. օտարերկրյա քաղաքացիների աշխատանքի թույլտվության վերաբերյալ պետական տուրքի վճարման անդորրագիրը (2010թ. հունվարի 29-ի դրությամբ պետական տուրքը կազմում է 2000 ԱԴ ռուբլի)

Միգրացիոն ծառայության աշխատակիցը գրանցում է դիմումը և դրա ընդունման մասին նշումով օրինակը վերադարձնում Ձեզ:

Աշխատելու թույլտվությունը ձևակերպվում է Ձեր դիմումի գրանցման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

*Աշխատելու թույլտվության մերժումը կարող է բողոքարկվել դաճնային միգրացիոն ծառայությունում կամ դատարանում՝ մերժումը սահմալուց հետո եռօրյա ժամկետում:*

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ  
ԳՈՐԾԱՏՈՒԻ ՄՈՏ  
ՊԱՏԵՆՏԻ (ՎԿԱՅԱԳՐԻ) ՍՏԱՑՈՒՄ



Եթե որոշել եք աշխատել ՌԴ-ում Ֆիզիկական անձ գործատուի մոտ (օրինակ՝ այգեպան, դայակ...), ապա՝ աշխատելու համար ձեզ անհրաժեշտ է ունենալ Պատենտ, որի համար հարկավոր է միգրացիոն ծառայության տարածքային մարմին ներկայացնել՝

- դիմում Պատենտ ստանալու մասին,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- միգրացիոն քարտ,
- ֆիքսված ավանսային վճար՝ ամսական 1000

ՌԴ ռուբլի

Պատենտը տրվում է 1-3 ամիս ժամկետով: Պատենտի ժամկետը կարող է բազմիցս երկարաձգվել 3 ամսով՝ ամսական 1000 ՌԴ ռուբլի վճարի դիմաց: Պատենտի գործողության ժամկետը երկարացված է հաշվվում այն ժամանակահատվածով, որի համար Դուք վճարել եք ֆիզիկական անձանց համար նախատեսված եկամտահարկը՝ ֆիքսված ավանսային վճարի տեսքով: Այս դեպքում չի պահանջվում դիմել միգրացիոն տարածքային ծառայություն: Պատենտի գործողության ժամկետը դադարեցվում է այն օրվանից, որը հաջորդում է նախորդ վճարած եկամտահարկի ժամանակահատվածի վերջին օրվան:

Այն դեպքում, երբ համապատասխան բյուջե վճարվելիք հարկի ընդհանուր գումարը, որը Դուք հաշվարկել եք Պատենտի հիման վրա իրականացված Ձեր աշխատանքային գործունեությունից փաս-

տացի ստացած եկամուտներից, գերազանցում է ֆիքսված ավանսային վճարի գումարը տվյալ հարկային հաշվետու ժամանակահատվածում, ապա Դուք պարտավոր եք ներկայացնել հարկային հայտարարագիր:

Միևնույն ժամանակ Պատենտի գործողության ամբողջ ժամանակահատվածը չի կարող գերազանցել 12 ամիսը, Պատենտը տրամադրելու օրվանից:

Պատենտը ստանալու օրից 12 ամիսը լրանալուց հետո Դուք կարող եք կրկին դիմել միգրացիոն ծառայության տարածքային մարմին նոր Պատենտ ստանալու խնդրանքով:

Եթե Պատենտի ժամկետը չի երկարաձգվում կամ նորը ունենալու անհրաժեշտության դեպքում չեք դիմում այն ստանալու համար, և լրացել է Ձեր՝ ՌԴ-ում օրինական գտնվելու ժամկետը, ապա Պատենտի ժամկետի ավարտի օրվանից 15 օրվա ընթացքում Դուք պարտավոր եք լքել ՌԴ տարածքը: Նշված 15 օրերի ընթացքում Ձեր՝ ՌԴ-ի տարածքում գտնվելը համարվում է օրինական:

Անհրաժեշտ է պահպանել պատենտի համար վճարած բոլոր անդորրագրերը, հաջորդ տարի նորը ստանալու համար:

Պատենտը համարվում է օրինական միայն օրինական միգրացիոն հաշվառում ունենալու դեպքում:

Աճխասանֆային գործունեությունն ծավալելու թույլտվություն ստանալուց 30 օրվա ընթացքում Դուք ղեկ է ներկայացնեք բժշկական զննման փաստաթղթեր:

Ինֆեկցիոն հիվանդությունների հայտնաբերումը կարող է հիմք հանդիսանալ երկրում անցանկալի լինելու մասին որոշում ընդունելու համար: ՄԻԱՎ հայտնաբերվելու դեպքում Ձեզ կարող են ենթարկել արտասահման (դեմոնստրացիայի):



## **Հիշե՛ք**

*Եթե վերը նշված ժամկետում օտարերկրյա ֆաղափա-  
ցին չի սրանադրում համադասասխսան բժշկական  
փաստաթղթերը, ադա նրան սրանադրված աճխասան-  
ֆային գործունեություն ծավալելու թույլսվությունը  
կորցնում է իր իրավական ուժը և գործասուն դարսավոր  
է լուծելու աճխասողի հեճ աճխասանֆային դայնանա-  
գիրը:*

Հիշեք՝ Դուք կարող եք աշխատել միայն ՌԴ այն  
շրջանում, որտեղ Դուք հաշվառվել եք: Այլ շրջան  
տեղափոխվելու համար անհրաժեշտ է առաջին  
հերթին դուրս գալ հաշվառումից և հետո անցնել  
ամբողջ հաշվառման ընթացակարգը նոր շրջանում  
հաշվառման կանգնելու համար:



## **- Աւխասանֆային դայմանագիր գործատուի հետ**

Միգրացիոն ծառայության կողմից ՌԴ-ում աշխատելու թույլտվությունը ստանալուց հետո անհրաժեշտ է գործատուի հետ կնքել աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր:

Պայմանագրի կնքումը անհրաժեշտ է Ձեզ, քանի որ`

- միայն պայմանագրի առկայության դեպքում Դուք կարող եք օրինական աշխատել Ռուսաստանի Դաշնությունում: ՌԴ-ում ապրելու և աշխատելու համար սահմանված ժամկետը հավասարեցվում է պայմանագրի գործողության ժամկետին, բայց չի կարող գերազանցել սահմանը հատելու օրվանից հաշված` մեկ տարին:

- միայն օրինական կնքված պայմանագրի առկայության դեպքում Դուք կարող եք դիմել իրավապահպան մարմիններին կամ դատարան, օրինակ եթե Ձեզ չեն վճարել Ձեր աշխատավարձը:

Ձեր գործատունն իր հերթին պարտավոր է միգրացիոն ծառայությանը և բնակչության զբաղվածության ծառայությանը ծանուցել Ձեզ հետ կնքված պայմանագրի մասին, իսկ անհրաժեշտության դեպքում տալ երկրորդ ծանուցումը Ձեր՝ ՌԴ-ում գտնվելու ժամկետի երկարաձգման մասին: Այն ուղղակի կապված է Ձեզ հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետի հետ:

### Յիշե՛ք


Ծանուցման բլանկը բաղկացած է երկու մասից: Զանոգվե՛ք, որ Ձեր գործատուն տրամադրել է Ձեզ միգրացիոն ծառայության կողմից կատարված նշումով մասը:

- ժամկետը երկարաձգելուց հետո Դուք կարող եք մնալ և աշխատել ՌԴ-ում Ձեր պայմանագրի գործողության ժամկետի չափով:

Աշխատանքի թույլտվության ժամկետի երկարեցումը իրականացվում է երեք օրվա ընթացքում առանց հաշվի առնելու քվոտաների առկայությունը, սակայն դրա վերաբերյալ դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հարկավոր է միգրացիոն ծառայություն ներկայացնել աշխատանքի նախորդ թույլտվության ժամկետը լրանալուց 15 օր առաջ:

Աշխատանքի թույլտվության երկարեցման մերժումը հնարավոր է միայն օրենքով սահմանված դեպքերում:

Պայմանագրում պետք է հստակ նշված լինի՝  
աշխատանքի նկարագրությունը, ժամկետը, աշխատաժամանակը,  
աշխատավարձի գումարի չափը և այն վճարելու ժամկետը, կողմերի  
պարտականությունները և իրավունքները, ամենամյա վճարովի  
արձակուրդի տրամադրման պայմանները և կարգը:



### **- Պայմանագրի կնքման համար դաժնադիր դայմանները**

Պայմանագիրը պետք է կնքվի գրավոր ձևով, ստորագրված լինի Ձեր և գործատուի միջև և վավերացվի գործատուի կողմից, յուրաքանչյուր կողմին տրվի մեկական օրինակ:

## **Եթե Ձեզ հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր, ապա՝**

Ձեր աշխատավարձի չափը չի կարող պակաս լինել ՌԴ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափից:

Աշխատանքային պայմանագրում կարելի է նախատեսել փորձաշրջան մինչև 3 ամիս ժամկետով:

Աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատանքի ընդունումը ձևակերպվում է հրամանով, ինչպես նաև կատարվում է գրառում աշխատանքային գրքույկում:

## **Եթե Ձեզ հետ կնքվել է քաղաքացիաիրավական պայմանագիր, ապա՝**

Դուք ինքնուրույն և Ձեր ռիսկով եք իրականացնում Ձեր պարտավորությունները: Ձեզ վրա չեն տարածվում ներքին կարգապահական կանոնները:

Կատարված աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերվելու դեպքում պատվիրատուն իրավունք ունի պահանջել անհատույց կրկին կատարելու աշխատանքը կամ հատուցել պատվիրատուի կրած ծախսերը:

Քաղաքացիաիրավական պայմանագրից ծագող կողմերի պարտավորությունների միջև վեճերը լուծվում են միայն դատական կարգով:

Եթե Ձեր գործատուն կամ պատվիրատուն վաղաժամ լուծել է Ձեզ հետ պայմանագիրը, կամ Դուք եք որոշել փոխել աշխատանքի վայրը մինչև պայմա-

նագրի ժամկետի ավարտը, ապա նոր աշխատանքի տեղավորման համար Դուք ունեք ընդամենը 15 օր:

Եթե չեք հասցրել աշխատանքի տեղավորվել 15 օրվա ընթացքում, պարտավոր եք լքել Ռուսաստանի Դաշնությունը կամ ձեռք բերել Պատենտ:

Հնարավոր է նաև կնքել նոր պայմանագիր՝ այլ մասնագիտությամբ աշխատանք կատարելու համար, սակայն միևնույն շրջանում:

Յոթ աշխատանքային օրվա ընթացքում Դուք պարտավոր եք անձամբ ներկայանալ միգրացիոն դաշնային ծառայություն Ձեր աշխատանքի թույլտվության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու համար: Եթե նոր կնքած պայմանագրի ժամկետը ավելին է, քան վաղօրոք ստացած աշխատանքի թույլտվության ժամկետը, ապա դրա ժամկետը կերկարաձգվի, սակայն ոչ ավելի, քան ՌԴ մուտք գործելու օրվանից մեկ տարին լրանալը:

## **ՌԴ-ի հարկային օրենսդրության իմացությունը**

Աշխատելով ՌԴ-ում և ստանալով եկամուտ՝ Դուք պարտավոր եք վճարել հարկեր: Հարկերի փոխանցման պարտավորությունը հիմնականում կատարվում է գործատուի կողմից և սահմանվում աշխատանքային պայմանագրով: Հարկերի վճարումը պարտադիր է և այն Ձեզ տալիս է արտոնություններ: Այսպես, հարկերի վճարման դրույքաչափը կախված է աշխատողի հարկային ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից: Եթե Դուք ՌԴ-ում գտնվում եք փաստացի 183 օրից պակաս, ապա Դուք համարվում եք ոչ ռեզիդենտ և հարկվում է Ձեր եկամտի 30%-ը: Իսկ եթե Դուք գտնվում եք ՌԴ-ում 183 օրից ավելի, ապա համարվում եք ռեզիդենտ և Ձեր եկամուտները 30%-ի փոխարեն հարկվում են 13%-ի չափով:

Օտարերկրյա քաղաքացին, որը համարվում է ռեզիդենտ, օգտվում է հարկային օրենսդրությամբ նախատեսված մի շարք այլ արտոնություններից:

Եթե Դուք աշխատում եք Պատենտով, ապա եկամտահարկը կազմում է 13 % սկսած առաջին օրվանից, անկախ ՌԴ-ում գտնվելու ժամկետից:

Հարկման օբյեկտ են համարվում օտարերկրյա քաղաքացու աշխատանքային և քաղաքացաիրավական պայմանագրերի հիման վրա ստացած բոլոր եկամուտները:

Եկամտահարկի հաշվարկը անհրաժեշտ է, եթե Դուք ՌԴ-ում եք գտնվում կես տարուց ավելի և ցանկանում եք Ձեզ վերադարձնել ավելորդ վճարված հարկի մի մասը, կամ եթե Դուք աշխատում եք Պատենտով:

Վճարված հարկերը հաշվարկելու համար նպատակահարմար է գործատուից խնդրել 2-НДФЛ ձևը:

Եթե աշխատում եք ֆիզիկական անձի մոտ, ապա պայմանագրերով ստացված գումարների հաշվարկը պետք է կատարեք ինքնուրույն:

## ՄԻԳՐԱՆՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Միգրանտ աշխատողները պետք է օգտվեն նույն-պիսի իրավունքներից, որոնք ունեն տեղացի աշխատողները՝

- համարժեք աշխատավարձ՝ համարժեք աշխատանքի դիմաց,
- աշխատանքի երաշխավորված վարձատրություն,
- սահմանված աշխատաժամեր ու հանգստի և ընդմիջման ժամեր,
- անվտանգ աշխատանքի իրավունք,
- արհեստակցական միություններին անդամակցելու իրավունք,
- իրավունքների պաշտպանություն դատական ատյաններում,
- գործատուին փոխելու իրավունք (հնարավորություն),
- շտապ բժշկական օգնություն ստանալու իրավունք,
- զբաղվածության կենտրոններում և այլ հաստատություններում խորհրդատվական, տեղեկատվական ծառայություններ ստանալու իրավունք:

Աշխատանքային պայմանագրով աշխատողների վրա տարածում են արհմիությունների հետ համաձայնեցված աշխատանքային իրավունքի նորմերը:

Երաշխավորվում է 40 ժամյա աշխատանքային շաբաթ: Աշխատողի համաձայնությանը արտաժամյա աշխատանքներում ներգրավելու դեպքում աշխատողին տրվում է հավելավճար: Հանգստյան կամ տոնական օրերին աշխատանքը վճարվում է նվազագույնը կրկնակի չափով:

Գործատուն պարտավոր է ապահովել աշխատանքի անվտանգ պայմաններ, տրամադրել միջոցներ կուլեկտիվ և անհատական պաշտպանության համար:

Կազմակերպությունում կուլեկտիվ պայմանագրի առկայության դեպքում, դրա դրույթները տարածվում են բոլոր աշխատողների վրա՝ ռուս և օտարազգի:





**- ԱՇխատանքային իրավունքների դաժժամությունը և արհմիութենական կազմակերպություններին անդամակցելու անհրաժեշտությունը**

Ամբողջ աշխարհում արհմիութենական կազմակերպությունները հանդես են գալիս որպես աշխատողի աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպան:

Ի տարբերություն այլ կազմակերպությունների՝ արհմիությունները ստեղծվում են աշխատողների կողմից իրենց աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով:

Արհմիութենական կազմակերպությունների և դրանցում ընգրկված աշխատողների իրավունքները պաշտպանված են արհմիությունների մասին օրենքով և այլ իրավական ակտերով: Այսպիսով՝ ցանկացած աշխատող, արհմիությանը անդամակցելով, ավելի պաշտպանված է գործատուի կողմից իր իրավունքների հնարավոր չարաշահումից և իր թիկունքում ունի իր նման աշխատողների աջակցությունը:

Արհմիությունը միասնական, ամբողջական, կայուն միավորում է, որը ստեղծվում և իր գործունեությունն իրականացնում է աշխատողների կողմից և նպատակ ունի ներկայացնել և պաշտպանել աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված իրավունքները և օրինական շահերը, բարելավել աշխատանքային պայմանները:

Արհմիությունը միակ կազմակերպությունն է, որը կարող է օրենքով սահմանված կարգով գործել կազմակերպության ներսում:

Սա է պատճառը, որ ՌԴ -ում աշխատանքի անցնելուց հետո խորհուրդ է տրվում անդամակցել տեղի արհմիություններին, որի համար մեկնելուց առաջ անհրաժեշտ տեղեկատվություն կարող եք ստանալ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայից: ՌԴ արհմիություններին անդամակցելու արդյունքում կկարողանաք իրականացնել Ձեր աշխատանքային բոլոր իրավունքների և շահերի պաշտպանությունը, կստանաք իրավաբանական օգնություն: Արհմիությունների անդամների իրավունքները ներառում են միավորման ազատության և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքները, որոնք Աշխատանքի միջազգային կազմակերպությունը դիտում է որպես հիմնարար սկզբունք, այդ պատճառով այն պետք է պաշտպանվի բոլոր պետությունների կողմից:

## **Միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանությունը արհմիությունների միջոցով**

Համաաշխարհային փորձը ցույց է տալիս, որ միգրանտ աշխատողների շահագործման կանխարգելման ամենաարդյունավետ միջոցներից մեկը նրանց՝ արհմիությանը անդամակցելու իրավունքը իրականացնելն է:

Միգրանտների աշխատանքային իրավունքների պաշտպանության կազմակերպումը արհմիությունների համար առաջնային խնդիրներից մեկն է, քանի որ վերջիններս դասվում են աշխատող հասարակության խոցելի խմբերի շարքում:



Աշխատավայրերում դժբախտ պատահարներից կան մասնագիտական հիվանդություններից մահացող մարդկանցից շատերը աշխատանքային միգրանտներ են, որոնք հաճախ ընդունող երկրում մնում են առանց որևէ աջակցության: Անկանոն միգրացիան կարող է հիմք հանդիսանալ հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի համար, քանի որ թրաֆիքինգի կազմակերպիչները օգտվում են աշխատանքային միգրանտների խոցելի վիճակից և շահագործում նրանց:

Այդ իսկ պատճառով հարկավոր է, որ պոտենցիալ միգրանտը անհրաժեշտ տեղեկություններ ունենա ընդունող երկրում իրեն սպասվող հնարավոր խնդիրների և դրանց լուծման ճանապարհների վերաբերյալ նախքան մեկնման որոշումն ընդունելը:

**Չիչեք՝ միգրանտ աշխատողները կարևոր ծառայություն են մատուցում իրենց աշխատանքով և ընդունող երկիրը պարտավոր է ապահովել Ձեզ արժանապատիվ աշխատանքով և հոգալ Ձեր անվտանգությունը:**

***Չե՛սե՛՛ք մեր խորհուրդներին, դրանք կօգնեն Ձեզ ՌԴ-ում անվճանգ աշխատելուց հետո աղափով վերադառնալ հայրենիք:***



Լրացուցիչ տեղեկություններ և անվճար խորհրդատվություն ստանալու համար գանգահարե՛ք հետևյալ հեռախոսահամարով՝ (374 10) 58 92 31 կամ այցելեք ՀԱՄԿ, 8-րդ հարկ, 806 սենյակ՝ ՌԴ մեկնող աշխատանքային միգրանտների իրազեկման կենտրոն:

